Առողջապահության նախարարության «Տաշիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

2026-06-29 14:36:01

Հայտատու	Առողջապահության նախարարություն
Տեսակ	Հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող, բաժնեմաս ունեցող ՓԲԸ-ների գործադիր մարմինների թափուր պաշտոնների համար բաց մրցույթ անցկացնելու մասին հայտարարություն
Հիմք	ՀՀ կառավարության 03.02.2022թ.-ի N 129-Ն որոշում

Հայտարարվում է բաց մրցույթ Առողջապահության նախարարության «Տաշիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին կարող է մասնակցել այն գործունակ չափահաս Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որն ունի՝
1) բարձրագույն կրթություն և ղեկավարման բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ առողջապահության ոլորտում կամ
2) բարձրագույն կրթություն և հանրային առողջության և առողջապահության կազմակերպման, առողջապահության կառավարման ոլորտի հետավարտական մասնագիտական կրթություն և ղեկավարման բնագավառի առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ առողջապահության ոլորտում կամ
3) բարձրագույն կրթություն և Կառավարության որոշմամբ հաստատված մագիստրոսի կրթական ծրագրերով մագիստրոսի որակավորում և ղեկավարման բնագավառի առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ առողջապահության ոլորտում:
Մրցույթը կանցկացվի 2026 թվականի օգոստոսի 28-ին ժամը՝ 1030-ին:
Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները լիազոր մարմին են ներկայացնում՝
1) դիմում, որում նշվում է հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսի համարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).
2) մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի.

3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.
4) ինքնակենսագրություն.
5) անձը հաստատող փաստաթղթի պատճեն.
6) բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճեն.
7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ.
8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ.
9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշմամբ սահմանված որևէ հիվանդությունների բացակայության վերաբերյալ.
10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.
11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).
12) պետական կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:
Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն (Առողջապահության նախարարություն՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, աշխատանքային օրերին ժամը 930-1700) կամ առցանց (էլ. հասցեն՝ h_sargsyan@moh.am)՝ բացառությամբ Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգի, որը ներկայացվում է առձեռն:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2026 թվականի հուլիսի 24-ը ժամը 17:00-ն:
Մրցույթը կկայանա Առողջապահության նախարարության շենքում (ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3): Քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Առողջապահության նախարարություն՝ հեռ. 060-80-80-03/ 1504, 1505:

37460808003
h_sargsyan@moh.am
ԿԵՆՏՐՈՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՏՈՒՆ 3